

Ասիկա ամենէն գլխաւոր պատճառն էր իր հոն ուղեւորութեան:

Յակոբ քհ. Կեսարացի կը պատմէ թէ հոն «արարեալ ժողով բազում եպիսկոպոսաց եւ վարդապետաց սակա պարտոցն Երուսաղէմայ. նաեւ էնկի Սօճայն Անքա եւ այլ բազում դոշիքաւորաց, վաճառականաց եւ ռաւկաց, գրեցին առ առաջնորդս եւ առ դոշիքաւորսն Վանայ եւ ժողովեալ բազում առաջնորդաց եւ դոշիքաւորաց եւ եկեալ յԵրուսաղէմ ՌԾԹ (=1610) թուին, եւ եր պարտք տուրք Երուսաղէմայ ԿՌ (60,000) դրշ. որ առաջնորդ եր Դաւիթն Արդար. սասարուքեանք հօգորին Ասուծոյ վճարեալ զպարտքն ազատեալ զզգեսքն, եւ եղեալ զԴրիգոր Պարոնէսերն առաջնորդ Ս. Երուսաղէմայ ի սոյն ամին, որոց վարձատրութիւնքն ի Քրիստոս շիցի ի ժամ դասասանին ամեն» (Յակոբ քհ. Կեսարացի):

Այս տողերը՝ իրենց համառօտութեան մէջ սխալ հասկցողութիւններու տեղի տուած են:

Հ. Դր. վրդ. Գալէմքեարեան եւ Օրմանեան (Աղգապարտ՝ 2318-9) այնպէս հասկըցած են թէ Դրիգոր վրդ. Կեսարացին ալ Երուսաղէմ եկողներուն մէջ էր եւ մասնակից հոն պարտավճարութեան աշխատանքին եւ Դրիգոր Պարոնտէրի պատրիարք ընտրուելուն (տես Կենսագրութիւններ Ա. էջ